

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Ներսես Շնորհալու մահվան ութհարյուրամյակին նվիրված՝ Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի 6 ապրիլ 1973 թվակիր կոնդակի հաստատագրման ձևը մի նոր անօրինական արարք է, որի համար Մայր Աթոռս ցավ է հայտնում և կոչ անում մեր սուրբ եկեղեցու սպասավորներին և ժողովրդին՝ մերժել այն, քանի որ Տանն Կիլիկիո գահակալն իրավասություն չունի «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը օգտագործելու և ոչ էլ կոնդակ ուղղելու իր Աթոռից դուրս՝ մեր նվիրապետական Աթոռներին, թեմերին և համայն մեր ժողովրդին:

Շատ տխուր է հաստատել, թե նաև այսպիսի նվիրական առիթով, ինչպիսին Ամենայն Հայոց Շնորհալի սուրբ Հայրապետի ոգեկոչումն է, Անթիլիասի գահակալը վերատին դրսևորում է անպատասխանատու գործելակերպ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

18-ը հունիսի 1973 թ.,
Ս. Էջմիածին